ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » _____ 2009թ. h. _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲ Ընկերությանը /ՀՎՀՀ 01801249, ք. Երևան՝ Ռաֆֆու 111/ տրամադրել գույքահարկի արտոնություն 5 մլն. /հինգ միլիոն/ դրամի չափով նվազեցնելով սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող Ռաֆֆու 111 գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ 24.12.2008թ-ից մինչև 19.10.2009թ. հաշվարկված գույքահարկի չվճարված տույժի մնացորդը՝ 1 489 777 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունինը հազար յոթ հարյուր յոթանասունյոթ/ դրամ և ապառք՝ 3 510 223 /երեք միլիոն հինգ հարյուր տասը հազար երկու հարյուր քսաներեք/ դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Նախագծի հեղինակ՝ Երևանի քաղաքապետ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու 111 հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 19.10.2009թ. դրությամբ ունի 21,9 մլն. դրամի չափով գույքահարկի պարտք, որի համար 15.09.2009թ. 01/112 գրությամբ դիմել է քաղաքապետին օրենքով սահմանված կարգով գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Խնդիրը կայանում է նրանում, որ Ռաֆֆու 111 հասցեում տեղակայված ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող շենքում բնակվում է մոտ 40 ընտանիք, որոնց կացության իրավական վիճակն անորոշ է:

Ընկերությունը 2008թ. հոկտեմբերից ժամանակին վճարել է շուրջ 170 աշխատակիցների աշխատավարձերը, 2009թ. հունվարից մարել է պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտքերը, գույքահարկի վճարման գծով եղել է բարեխիղճ հարկատու՝ ժամանակին կատարելով տեղական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունները: Սակայն ներկա տնտեսական ճգնաժամի և հայ ընտանիքներին անօթևան չթողնելու բայրացակամ վերաբերմունք դրսևորելու պատճառով, ընկերությունը չի կարողանում կատարել հարկային պարտավորությունները:

Խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի մոտ 2009թ. օգոստոսի 4-ին շահագրգիռ ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում: Արդյունքում որոշվել է, որ Հայաստանի Հանրապետությունը «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ից պետք է գնի նրան պատկանող հակահրդեհային դեպոյի 4 հարկանի շենքը, որից ստացված գումարների հաշվին ընկերությունը կարող է մարել իր հարկային պարտավորությունները:

Վերոնշյալ առաջարկության կապակցությամբ 14.08.2009թ. թիվ 01/16/4560-09 գրությամբ իր համաձայնությունն է տվել ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ փոխվարչապետ Ա. Գևորգյանը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ընկերությունը ստեղծված ֆինանսական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով՝ առաջարկվում է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի նկատմամբ սահմանել 5 մլն. /հինգ միլիոն/ դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու վերաբերյալ

«ՌԱՕ Մարս» ՓԲ Ընկերությանը /ՀՎՀՀ 01801249, ք. Երևան՝ Ռաֆֆու 111/ սեփականության իրավունքով պատկանող Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող Ռաֆֆու 111 շենքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ գույքահարկի պարտքը 19.10.2009թ. դրությամբ կազմում է 21,9 մլն. դրամ, որից ազատելու համար ընկերությունը 15.09.2009թ. 01/112 գրությամբ դիմել է քաղաքապետին օրենքով սահմանված կարգով գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով «ՌԱՕ Մարս» ՓԲԸ գրությունը՝ ֆինանսական ծանր վիճակի ու գույքահարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ, և ընկերությանը հարկային պարտավորությունները մարելու հնարավորություն ընձեռելու մասին ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջարկությունը՝ գնելու «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու 111 հասցեում գտնվող հակահրդեհային դեպոյի 4 հարկանի շենքը, նպատակահարմար եմ գտնում տրամադրել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին 5 մլն. /հինգ միլիոն/ դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ